չունէինք. և յորժամ հասինք ի տեղն, ներս չի թողին զս ահի մարսիլեաու մահին։ Մնացի Ը օր ևս նաւի միջումն. ետոյ հրաման եղև թէ ճանապարհորդքն ելանեն առանց քսրի։ Նայև ելա(յ) մին պարքաով գնացի ի քաղաքն. և ի միւսում օրն արգուհալ տուի թագաւորին. հրաման տուաւ թէ եպսին պաւուլն միայն թող հանեն ի նագարէթն. և ի միւս կողմանէ նաւաւարին զօր թէ ել գնայ։ Մինչ մեք յորս ցամաքով և որ ծովով գնացինք, նաւն ելաւ գնաց. և ես մնացի միայն վերայիս շորերովն։ Ետոյ մին մէմօռեալ տուի թագաւորին թէ ինձ մին տեղ տուր պառկելու. շուտով օղարկեց զիս Երուսղմ պտրց Վանքն և կերակուր ևս թային արաւ. ետոյ Ը ոսկի ևս ետուր շորեր չինելու և չինեցին լաթինացոց ձևն. ըռուքէթիս մէջլին միայն Ոչ տուգաթ է։ Եւ յորժամ շորերն եղև, հագայ և գնացի առ թագաւոր. մին կէս ժամու չափ հետս խօսեցաւ ինձ համար. ինձ համար աղօթք արայ. և մին պակասութիւն ունիս ինձ ծանոյ ասելով ուրախ դիմօք. և ևս յունվարի առաջի օրն թատէօ լաւստամօ կարդացին ճիզուիթի եկեղեցին պատրիարգն. թգւրն և թագուհին մեծամեծ ալայով. ևս վեց ձիով կառօցա եկաւ սարայէն. ելա գնացի. նայև եպիֆանի[1] էին ևս գնացի թագաւորին գափէլն մեծ օֆիցիօն արարին. այս այսպէս....

Տէր Յարութիւն
Եպիսկոպոսէ գրեցաւ

1721. թուին յունվարի 10
Ալիզպօնայ քաղաքի

ԻԳ.

Նոյնը կրնանք ըսել հետևեալ թղթոյ նամակագրին համար, որ մինչ տեղեկութիւններ կը հաղորդէ Դրանսիլուանիոյ Հայոց ազգային գործերուն և եկեղեցական սովորոյթներուն շուրջ՝ կու տայ նաև այդ ժամանակի իր գործունէութեան ալ մէկ պարագան, ինչ որ այլուր յիշատակուած չենք գտներ։

Վերապատուելոյդ Տեառն Մխիթարայ Աբբայի և Աստուածաբանութեան Վարդապետի

Յայտ առնեմ տէրութեան քում, զի զգիրն որ գրեալ էիր Ունիսի քսանն, առընկալայ, և վասն գրոյն զոր յղեցին ի Հռոմ և խնդրեցին Միսօնար ի սուրբ Ժողովէն, կարի քաջ տեղեակ եմ և ոչ է ընդդէմ մեր։ Իսկ զայն որ ես գրեցի, այնու գրօվն ծանուցի սրբոյ Ժողովոյն թէ յոյժ հարկավոր է առաքումն Միսօնարի ի Դրանսիլվանիայ ի մէջ հայոց, վասն լեզուին՝ լատինականի, որ ընդ Եպիսկոպոսին Լադինի բերան առ բերան խօսելով լինի բազում օգուտ պարգամիտ ժողովրդեանն, և այլն։

... վասն Ծննդեան պահոցն ծանիք, զի է հաստատուն և կամին ամենեքին պահել յօժարութեամբ, սակայն հին սովորութիւնն ոչ բառնի առժամայն, այլ սակաւ սակաւ տեսանելով և լսելով ընտելանան չնորհիւ Տեառն, վասն զի են յօժարամիտք առ օգտակարսն։...

Ցանիր ևս, Սուրբ Ժողովն որ գրեալ էր մաճարու Եպիսկոպոսին թէ. Ընդէր թոյլ տաս որ տէր Մինասն խարնակէ զպահսն Հայոց, ըստ սովորութեան եկեղեցւոյն իւրեանց զոր ունին. որովհետև են միացեալք հաւատով ընդ մեզ. և այլն։ Զօրութեամբ նոյն գրոյն կոչեաց զչորս Եկեղեցւոյն զգլխաւորսն Հայոց. ընդ նոսին և զտէր Մինասն. կամեցաւ զի և ես լինիցիմ անդ ներկայ և ապա առաջի ամենեցուն արար քննութիւն վարուց

---

1. Յայտնութիւն Քրիստոսի։